Հավելված N 1
ՀՀ կառավարության 2017 թվականի
նոյեմբերի 9-ի N 1402 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԴԵՂԱՏՈՄՍԵՐԻ ԳՐՄԱՆ ԵՎ ԴԵՂԵՐ ԲԱՑ ԹՈՂՆԵԼՈՒ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին բուժում ստանալու նպատակով դիմած անձանց, ինչպես նաև հիվանդանոցային և արտահիվանդանոցային ձևով բժշկական օգնություն և սպասարկում ստացած և դուրս գրված պացիենտների բուժման շարունակականության անհրաժեշտության, համապատասխան ցուցումների առկայության դեպքում նշանակվում են դեղեր, և գրվում են դեղատոմսեր:

2. Հայաստանի Հանրապետությունում գրանցված և դեղատոմսով գրվող դեղերի ցանկում ընդգրկված դեղերը լիցենզավորված իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից գրվում են դեղատոմսերով: Առանց դեղատոմսի բաց թողնվող դեղերը կարող են գրվել սույն կարգի համաձայն:

3. Դեղատոմսը համարվում է գրված՝ պացիենտին հանձնելու պահից:

4. Դեղատոմսը գրվում է պացիենտի անունով՝ վերջինիս հետազոտման արդյունքների հիման վրա՝ ցուցումների առկայության դեպքում:

5. Դեղատոմսով բաց թողնվող դեղերը թույլատրվում է գրել բացառապես Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի նոյեմբերի 9-ի N 1402-Ն որոշման N 2 հավելվածով նախատեսված դեղատոմսերի ձևերի վրա:

6. Հայաստանի Հանրապետությունում կիրառվում են դեղատոմսերի ձևերի հետևյալ տեսակները՝

1) թմրամիջոց պարունակող դեղերի համար՝ N 1 (տպագրվելու են պետության կողմից).

2) հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր պարունակող դեղերի համար՝ N 2.

3) մեկանգամյա՝ N 3.

4) բազմակի օգտագործման, այդ թվում՝ անվճար կամ արտոնյալ պայմաններով տրամադրվող դեղերի համար՝ N 4: Դեղերի բազմակի օգտագործման դեղատոմսը բաղկացած է 6 կտրոնից, որոնց «Ա» և «Բ» հատվածները դեղատանը լրացվելուց հետո «Բ» հատվածը կտրվում և պահվում է դեղատանը:

7. Դեղատոմսը գրվում է անձամբ բժշկի կողմից հայերենով կամ լատիներենով, ընթեռնելի ձեռագրով, գրիչով՝ առանց ուղղումների կամ լրացվում է էլեկտրոնային առողջապահական համակարգի միջոցով՝ լրացնելով դեղատոմսերի ձևի բոլոր կետերը:

8. Թմրամիջոց պարունակող դեղերի դեղատոմսերի ձևն ունի սերիա և համարակալում: Սերիան սկսվում է «Ա» տառով, որից հետո գրվում է համարը: Դեղատոմսերի ձևի համարը վեցանիշ թիվ է, համարակալումն սկսվում է աջից ձախ՝ 000001-ից: Մեկ սերիայում տպագրվում է 999999 դեղատոմսերի ձև, որից հետո սերիան փոխվում է «Բ» տառի՝ համարակալումը կրկին սկսելով 000001-ից և այդպես շարունակ՝ ըստ անհրաժեշտության:

9. Թմրամիջոց պարունակող դեղերի դեղատոմսերի ձևը տպագրվում է պաշտպանվածության աստիճան ունեցող (ջրային նշաններ) 148 մմ x 210 մմ չափսերով (A 5) վարդագույն թղթի վրա: Դիմերեսի և դարձերեսի տառերը, գծերը սև են: Դեղատոմսերի ձևի դիմերեսի վրա տպագրական դաշտը սահմանվում է թղթի եզրերից՝ վերևից և ներքևից 15 մմ, ձախից՝ 30 մմ, աջից՝ 10 մմ: Դիմերեսի վերևի ձախ անկյունում նշվում են բժշկական հաստատության գտնվելու վայրը և հեռախոսահամարը, որոնք հաստատվում են հաստատության դրոշմակնիքով (առկայության դեպքում): Դարձերեսի վրա տպագրվում է «Բժշկի հուշաթերթիկ»: Դարձերեսի տպագրական դաշտն ազատ է:

10. Հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր պարունակող դեղերի N 2 դեղատոմսերի ձևը տպագրվում է 148 մմ x 210 մմ չափսերով (A 5) սպիտակ թղթի վրա: Դիմերեսի և դարձերեսի տառերը, գծերը կապույտ են: Ձևաթղթի դիմերեսի վրա տպագրական դաշտը սահմանվում է թղթի եզրերից՝ վերևից և ներքևից 15 մմ, ձախից՝ 30 մմ, աջից՝ 10 մմ: Դիմերեսի վերևի ձախ անկյունում նշվում են բժշկական հաստատության գտնվելու վայրը և հեռախոսահամարը, որոնք հաստատվում են հաստատության դրոշմակնիքով (առկայության դեպքում): Դարձերեսի վրա տպագրվում է «Բժշկի հուշաթերթիկ»: Դարձերեսի տպագրական դաշտն ազատ է:

11. Մեկանգամյա դեղերի N 3 դեղատոմսերի ձևը դիմերեսի վերևի ձախ անկյունում նշվում են բժշկական հաստատության գտնվելու վայրը և հեռախոսահամարը, որոնք հաստատվում են հաստատության դրոշմակնիքով (առկայության դեպքում) կամ անհատ ձեռնարկատիրոջ դրոշմակնիքով (առկայության դեպքում): Դարձերեսի վրա տպագրվում է «Բժշկի հուշաթերթիկ»: Դարձերեսի տպագրական դաշտն ազատ է: N 3 դեղատոմսային ձևաթուղթը կարող է տպագրվել բժշկական հաստատության տարբերանշան ունեցող ձևաթղթի վրա՝ պահպանելով նշված չափսերը:

12. Բազմակի օգտագործման, այդ թվում՝ անվճար կամ արտոնյալ պայմաններով տրամադրվող դեղերի համար՝ N 4 դեղատոմսերի ձևի գրումն իրականացվում է ըստ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի նոյեմբերի 9-ի N 1402 -Ն որոշման N 2 հավելվածով նախատեսված N 4 դեղատոմսերի ձևի վրա:

13. Բժշկի կողմից գրված դեղատոմսը հաստատվում է բժշկի ստորագրությամբ: Գրված դեղատոմսը լրացուցիչ դրոշմակնիքով (առկայության դեպքում) կամ մեկ այլ անձի (բժշկի անմիջական ղեկավարության կողմից) ստորագրությամբ հաստատում, հավելյալ մատյանում գրանցում կամ հաշվառում չի պահանջում՝ բացառությամբ թմրամիջոցներ, հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր պարունակող դեղերի և անվճար կամ արտոնյալ պայ-

մաններով տրվող դեղերի, որոնցից յուրաքանչյուրի համար բժշկական հաստատության կողմից վարվում է առանձին մատյան:

14. Դեղատոմսերի ձևի վրա նշվում են՝

1) բժշկական հաստատության անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը, գտնվելու վայրը և հեռախոսահամարը.

2) դեղատոմսը գրելու ամսաթիվը.

3) պացիենտի անունը, ազգանունը (լրիվ).

4) ամբուլատոր բժշկական քարտի համարը.

5) պացիենտի ծննդյան թիվը կամ տարիքը, ընդ որում, մինչև 5 տարեկան երեխաների տարիքը գրվում է տարիներով և ամիսներով.

6) նշանակվող դեղի վերաբերյալ տեղեկատվությունը (դեղի համընդհանուր անվանում, դեղաչափ, դեղաձև, քանակ, կիրառում).

7) բժշկի անունը, ազգանունը.

8) բժշկի մասնագիտությունը.

9) դեղատոմսի դարձերեսի վրա տպագրվում է «ԲԺՇԿԻ ՀՈՒՇԱԹԵՐԹԻԿ»:

15. Դեղատոմսերում դեղերը գրվում են համընդհանուր անվանումներով՝ «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան: Դեղի առևտրային անվանումով դեղատոմսի գրումը հնարավոր է միայն բժշկի պատճառաբանված հիմնավորման դեպքում: Ընդ որում, հիմնավորման մեկ օրինակը դեղատոմսի հետ ներկայացվում է դեղատուն, իսկ մյուս օրինակը կցվում է պացիենտի հիվանդության պատմագրին կամ ամբուլատոր բժշկական քարտին:

16. Դեղերի բազմակի օգտագործման դեղատոմսով գրվում են պացիենտի երկարատև բուժումն իրականացնելու, ինչպես նաև դեղի ոչ ամբողջական սպառողական փաթեթով բաց թողնելու դեպքում:

17. Դեղատոմսում դեղի ընդունման ձևը, օգտագործման եղանակը գրվում է հայերենով՝ նշելով՝

1) դեղաչափը.

2) ընդունման հաճախականությունը, ընդունման ձևը.

3) ընդունման ժամանակը՝ կախված սննդի ընդունումից.

4) ընդունման տևողությունը (օրերով):

18. Բժիշկը կարող է նշանակել դեղեր, որոնք պատրաստվում և բաց են թողնվում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ դեղատնային գործունեության լիցենզիա ունեցող դեղատներից:

19. Գրված դեղի վերաբերյալ տեղեկատվությունը (անվանումը, միանվագ դեղաչափը, ընդունման հաճախականությունը, ձևը) նշվում է պացիենտի ամբուլատոր բժշկական քարտում կամ հիվանդության պատմագրում, ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում, պացիենտի բուժմանը վերաբերող փաստաթղթերում՝ ամփոփաթերթում (էպիկրիզում), բժշկական հանձնաժողովի (կոնսիլիումի) որոշման մեջ:

20. Պացիենտներին բազմակի օգտագործման դեղատոմսեր առանձին դեպքերում գրվում են բժշկի հիմնավորված որոշման հիման վրա՝ առավելագույնը վեց ամիս գործողության ժամկետով:

21. Թմրամիջոցներ և հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր պարունակող դեղերի համար բազմակի դեղատոմսեր չեն կարող գրվել:

22. Բազմակի դեղատոմսեր գրելու դեպքում բժիշկը դեղատոմսի վրա նշում է դեղատոմսի գործողության ժամկետը:

23. Մեկ դեղատոմսով թույլատրվում է գրել մինչև երկու անվանում դեղ՝ բացառությամբ թմրամիջոցներ և հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր պարունակող դեղերի,

որոնց դեպքում մեկ ձևաթղթի վրա գրվում է մեկ անվանում դեղ՝ քանակը միաժամանակ նշելով թվերով և տառերով:

24. Անվճար կամ արտոնյալ պայմաններով տրվող դեղերի գրումն իրականացվում է ըստ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի նոյեմբերի 9-ի N 1402 -Ն որոշման N 2 հավելվածով նախատեսված N 3 դեղատոմսով դեղատոմսերի ձևի վրա:

25. Պացիենտներին անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղեր նշանակելիս հիմք է ընդունվում ամբուլատոր բժշկական քարտում կամ հիվանդանոցային հաստատության կողմից տրված հիվանդության պատմությունից գրված քաղվածքում (էպիկրիզում) առկա ախտորոշումը:

26. Դեղատոմսերը գրվում են 2 օրինակից (բնօրինակ և պատճեն):

27. Անվճար կամ արտոնյալ պայմաններով տրվող դեղերի դեղատոմսերը պետք է լինեն համարակալված, և դեղատոմսի վրա գրվում են անվճար կամ զեղչի (տոկոսի) չափը, հաշվառման մատյանի հերթական համարը:

28. Որպես մարդասիրական օգնություն ստացված դեղերի գրումն իրականացվում է ըստ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի նոյեմբերի 9-ի N 1402 -Ն որոշման N 2 հավելվածով նախատեսված N 3 դեղատոմսով դեղատոմսերի ձևի վրա՝ նշելով «Մարդասիրական» նշագրումը:

II. ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐ ԵՎ ՀՈԳԵՄԵՏ (ՀՈԳԵՆԵՐԳՈՐԾՈՒՆ) ՆՅՈՒԹԵՐ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԴԵՂԵՐԻ ԳՐՈՒՄԸ

29. Արտահիվանդանոցային ձևով բժշկական օգնություն և սպասարկում ստացող պացիենտի համար թմրամիջոց պարունակող դեղերը գրվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի նոյեմբերի 9-ի N 1402 -Ն որոշման N 2 հավելվածով նախատեսված N 1 դեղատոմսի ձևով:

30. Հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր պարունակող դեղերը գրվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի նոյեմբերի 9-ի N 1402 -Ն որոշման N 2 հավելվածով նախատեսված N 2 դեղատոմսերի ձևով:

31. Թույլատրվում է մեկ դեղատոմսով գրել թմրամիջոցներ պարունակող դեղեր 10 օրացուցային օրվա ընթացքում բուժում ստանալու համար՝ բժշկի կողմից հաստատված դեղաչափով և քանակով: Այն դեպքում, երբ թմրամիջոցներ պարունակող դեղերի գրված քանակը, բժշկի անմիջական հսկողության ներքո, սպառվել է, կամ այդ ընթացքում պացիենտի առողջական վիճակի փոփոխություն է գրանցվել, որը պահանջում է դեղաչափի կամ դեղի ընտրության փոփոխություն, ապա բժիշկը կարող է գրել թմրամիջոցներ պարունակող դեղեր մինչև նախորդ դեղատոմսի 10-օրյա բուժման կուրսի ժամկետի ավարտը:

32. Թմրամիջոցներ և հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր պարունակող դեղեր կարող են գրել բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատությունների ընտանեկան բժիշկները, ինչպես նաև պացիենտին բուժող բժիշկները՝ անկախ մասնագիտությունից: Հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման դեպքում պացիենտները թմրամիջոցներ և հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր պարունակող դեղեր ստանում են տվյալ բժշկական հաստատությունում՝ պացիենտի հիվանդության պատմագրում բժշկի կողմից կատարված գրառման հիման վրա:

33. Առանձին դեպքերում թմրամիջոցներ և հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր պարունակող դեղեր կարող են նշանակվել նաև պացիենտի ժամանակավոր գտնվելու վայրի մոտակա պոլիկլինիկական բժշկական հաստատության բժշկի կողմից տնային կանչի միջոցով: Բժշկական հաստատության բժշկի կողմից տնային կանչի ընթացքում սահմանված ձևով իրականացվում է պացիենտի գրանցում, ընդ որում, գրանցման համար հիմք են հանդիսանում անձը հաստատող փաստաթուղթը և ախտորոշումն ու բուժումը հաստատող բժշկական փաստաթղթերը: Բժշկի կողմից պացիենտի գրանցման

համար լիազոր մարմնի կողմից սահմանված ձև լրացնելը հիմք է հանդիսանում պացիենտին պետության կողմից երաշխավորված բժշկական օգնություն և սպասարկում ստանալու, այդ թվում՝ թմրամիջոցներ և հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր պարունակող դեղեր անմիջապես նշանակելու համար:

34. Թմրամիջոցներ և հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր պարունակող դեղերի դեղատոմսն ստորագրվում է դեղը նշանակող բժշկի կողմից, որը հաստատվում է բժշկական հաստատության տնօրենի, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ տնօրենի տեղակալի կողմից՝ ստորագրությամբ և տվյալ բժշկական հաստատության կնիքով (առկայության դեպքում):

35. Թմրամիջոցներ և հոգեմետ (հոգներգործուն) նյութեր պարունակող դեղերի դեղատոմսերի ձևերի հաշվառման համար բժշկական հաստատություններում վարվում է առանձին մատյան, որի էջերը պետք է լինեն համարակալված, կարված և վավերացված բժշկական հաստատության տնօրենի կամ անհատ ձեռնարկատիրոջ ստորագրությամբ ու կնիքով (առկայության դեպքում): Մատյանում նշվում են դեղատոմսերի ձևի սերիան, հերթական համարը, ստացման ամսաթիվը, բժշկին ձևը տալու ամսաթիվը, քանակը, ում է տրվել (բուժող բժշկի անունը, ազգանունը), ձևերն ստացող բժշկի ստորագրությունը:

36. Պացիենտի ամբուլատոր բժշկական քարտի մեջ կամ հիվանդության պատմագրում բժշկի կողմից գրանցվում են թմրամիջոցներ և հոգեմետ (հոգեներգործուն նյութեր) պարունակող դեղերի դեղատոմսերում գրված դեղի անվանումը, դեղաչափը, դեղաձևը, ընդունման ձևը և հաճախականությունը:

37. Թմրամիջոցներ և հոգեմետ (հոգներգործուն) նյութեր պարունակող դեղերի դեղատոմսի ձևերը և դրանց հաշվառման մատյանները պետք է պահվեն մետաղյա չհրկիզվող պահարանում:

38. Հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր պարունակող դեղերի դեղատոմսի ձևերի հաշվառման համար վարվում է մատյան, որում նշվում են բժշկին տրամադրված դեղատոմսի ձևերի ընդհանուր քանակը, ում է տրվել (բժշկի անունը, ազգանունը, հայրանունը) տալու ամսաթիվը, ստացողի ստորագրությունը: Մատյանի էջերը պետք է լինեն համարակալված, կարված և վավերացված բժշկական հաստատության տնօրենի կամ անհատ ձեռնարկատիրոջ ստորագրությամբ ու կնիքով (առկայության դեպքում):

39. Թմրամիջոցներ և հոգեմետ (հոգներգործուն) նյութեր պարունակող և անվճար կամ արտոնյալ պայմաններով տրվող դեղերի դեղատոմսերի հաշվառման համար վարվում է մատյան, որի էջերը համարակալված են, կարված, վավերացված բժշկական հաստատության տնօրենի ստորագրությամբ և կնիքով (առկայության դեպքում):

40. Մատյանում նշվում է ամիսը, ամսաթիվը, պացիենտի անունը, ազգանունը, հայրանունը, հասցեն, ամբուլատոր բժշկական քարտի համարը, զեղչի տոկոսի չափը, դեղատոմսի բովանդակությունը և պացիենտի ստորագրությունը:

41. Դեղատոմսը գրելու ժամանակ առաջնորդվել հետևյալ թույլատրելի լատիներեն կրճատումներով՝

	Լրիվ գրությունը	Թարգմանությունը
aa	ana	- ական, հավասար
ac. acid	acidum	թթու
amp	ampulla	ամպուլ
aq.	aqua	ջուր
aq. destill.	aqua destillata	թորած ջուր
but.	butyrum	յուղ (կարծր)
comp., cps., cp.	compositus (a. um)	բարդ
D.	Da	տուր
D.S.	Da Signa	տուր նշիր

D. td.	Da talis doses	տուր այդպիսի դեղաչափեր
dil.	dilutus	նոսր
extr.	extractum	հանուկ
f.	fial.	թող դառնա
gtt.	gutta, guttae	կաթիլներ
inf.	infusum	թուրմ
in ampull	in ampullis	ամպուլաներում
in tab.	in tab(u)lettis	դեղահատերով
lin.	linimentum	հեղուկ քսուք
liq.	liquor	հեղուկ
M.	Misce	խառնիր
N.	numero	թվով
ol.	oleum	յուղ (հեղուկ)
pulv.	pulvis	փոշի
q. s.	quantum satis	որքան անհրաժեշտ է
r. rad,	radix	արմատ
Rp.	Recipe	վերցրու
Rep.	Repetatur!	կրկնիր
rhiz.	rhizoma	կոճղարմատ
S.	Signa	նշիր
sem.	semen	սերմ
simpl.	simplex	հասարակ
sir.	sirupus	օշարակ
sol.	solutio	լուծույթ
sp.	spiritus	սպիրտ
supp.	suppositorium	մոմ
tab.	tab(u)letta	դեղահատ

t-ra, tinct., tct	tinctura	ոգեթուրմ
ung.	unguentum	քսուք
vitr.	vitrum	սրվակ
ppt., praec.	praecipitatus	նստեցված
past.	pasta	մածուկ

III. ԴԵՂԵՐԸ ԲԱՑ ԹՈՂՆԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ

42. Բոլոր դեղերը՝ բացառությամբ առանց դեղատոմսի տրվող դեղերի, դեղատներից բաց են թողնվում միայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի նոյեմբերի 9-ի N 1402 -Ն որոշման N 2 հավելվածով հաստատված դեղատոմսերի ձևերի վրա գրված դեղատոմսերի համաձայն:

43. Բազմաբաղադրատարր դեղերի դեղատոմսերում թմրամիջոցներ, հոգեմետ (հոգեներգործուն), ուժեղ ազդող, թունավոր նյութեր պարունակող դեղերի առկայության դեպքում արգելվում է դրանք բաց թողնել պատրաստվող դեղի կազմից առանձին:

44. Դեղատանը պատրաստվող բոլոր դեղերի (ներդեղատնային պատրաստուկների), այդ թվում՝ թմրամիջոցներ, հոգեմետ (հոգեներգործուն), ուժեղ ազդող, թունավոր նյութեր պարունակող դեղերի ներդեղատնային պատրաստման ժամանակ պիտակի վրա գրվում է դեղի կիրառման հրահանգը:

45. Դեղատուն այցելության անհնարինության դեպքում թմրամիջոցներ և հոգեմետ (հոգներգործուն) նյութեր պարունակող դեղն ստանում է օրենքով սահմանված կարգով պացիենտի կողմից լիազորված անձը կամ օրինական ներկայացուցիչը՝ անձը հաստատող փաստաթղթով: Այդ դեպքում դեղատոմսի դարձերեսին նշում է ստացման ամսաթիվը, ստացված դեղի փաստացի քանակը, ստացողի վերաբերյալ տվյալները, և դեղատոմսն ստորագրվում է ստացողի կողմից:

46. Թմրամիջոցներ և հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր պարունակող դեղերի դեղատոմսերը գրման պահից գործողության մեջ են 10 օր, իսկ մնացած դեղերի և բազմակի դեղատոմսերը՝ 6 ամիս:

47. Միևնույն դեղատոմսով նշանակված ոչ բոլոր դեղերը բաց թողնելու դեպքում դեղատոմսի վրա նշագրում է կատարվում բաց թողնված դեղի (դեղերի), ինչպես նաև դեղի (դեղերի) բաց թողնող դեղատան տվյալների վերաբերյալ, որից հետո դեղատոմսի բնօրինակը վերադարձվում է պացիենտին: Դեղատոմսի բնօրինակը մնում է այն դեղատանը, որտեղից ձեռք է բերվել վերջին դեղը:

48. Սույն կարգի 13-րդ կետով նախատեսված դեպքերում բազմակի օգտագործման դեղատոմսով գրված դեղի՝ մասնակի բաց թողնելու յուրաքանչյուր դեպքում բազմակի օգտագործման դեղատոմսից մեկ կտրոնը կտրվում և պահվում է դեղատանը:

49. Դեղը ոչ ամբողջական սպառողական փաթեթով բաց թողնելու դեպքում բաց թողնվող քանակը դեղատան աշխատողը, դեղագետը կամ դեղագործը փաթեթավորում է նոր տարայում (պոլիէթիլենային տոպրակ, կիսահերմետիկ փաթեթ, սրվակ և այլն) և պիտակավորում՝ հայերենով նշելով դեղի առևտրային անվանումը, դեղաձևը, դեղաչափը, բաց թողնված քանակը, սերիան, պահպանման հատուկ պայմանը (առկայության դեպքում), դեղատան անվանումը, հասցեն, հեռախոսահամարը, պիտանիության ժամկետը (բոլոր դեղերի համար առավելագույնը 6 ամիս, իսկ ավելի պակաս մնացորդային պիտանիության ժամկետի դեպքում՝ փաստացի ժամկետը), բաց թողնելու ամսաթիվը: Պացիենտի պահանջի դեպքում նոր փաթեթն ապահովվում է դեղի՝ Հայաստանի Հանրապետությունում երաշխավորված ներդիր թերթիկով:

50. Դեղը բաց թողնելուց հետո դեղատոմսը մնում է դեղատանը և պահվում՝

1) N 1 դեղատոմսի ձևերի վրա գրված դեղատոմսերը՝ 3 տարի ժամկետով.

2) N 2 դեղատոմսի ձևերի վրա գրված դեղատոմսերը՝ մեկ տարի ժամկետով.

3) NN 3 և 4 դեղատոմսի ձևերի վրա գրված դեղատոմսերը՝ 6 ամիս ժամկետով՝ բացառությամբ առանց դեղատոմսի բաց թողնվող դեղերի:

51. Պահման ժամկետի ավարտից հետո դեղատոմսերը ոչնչացվում են՝ այրման կամ սարքի միջոցով մանրացման ճանապարհով, որը ձևակերպվում է համապատասխան ակտով:

52. Բազմակի օգտագործման դեղատոմսով դեղերը բաց թողնելու ժամանակ դեղատոմսը վերադարձվում է պացիենտին՝ դեղատոմսում նշելով բաց թողնված դեղի քանակը (սպառողական փաթեթը) և ամսաթիվը: Պացիենտի հերթական դիմումի ժամանակ հաշվի են առնվում դեղն ստանալու նախորդ նշումները:

53. Դեղատանը պահվում են թմրամիջոցներ և հոգեմետ (հոգեներգործուն) նութեր պարունակող դեղերի, դեղանյութերի հաշվառման առանձին մատյաններ, որոնցում նշվում են դրանց անվանումը, ստացման ամսաթիվը, չափի միավորը, որտեղից է ստացվել, հաշիվ-ապրանքագրի համարը, քանակը, ամենօրյա ծախսը և մնացորդը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍՏԵՓԱՆՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2017 թվականի
նոյեմբերի 9-ի N 1402 - Ն որոշման

Դեղատոմսերի ձև N 1

Բժշկական հաստատության,
անհատ ձեռնարկատիրոջ
(ընդգծել)
Դրոշմակնիքը (առկայության դեպքում)
Հասցեն _____
Հեռախոսահամարը _____

Սահմանված է
ՀՀ կառավարության 2017 թվականի
նոյեմբերի 9-ի N 1402 - Ն որոշմամբ
Դեղատոմսերի ձև N 1

Դ Ե Ղ Ա Տ Ո Մ Ս
Թմրամիջոց պարունակող դեղի համար
Ա 000001
____ _____ 200 __ թ.
(դեղատոմսը գրելու ամսաթիվը)

Պացիենտի անունը, ազգանունը (լրիվ)_____
Ամբուլատոր բժշկական քարտի համարը _____
Պացիենտի տարիքը _____
Բժշկի անունը, ազգանունը (լրիվ), մասնագիտությունը _____

Բժշկի ստորագրությունը

Կ.Տ. (առկայության դեպքում)

_____

Դեղատոմսը գործողության մեջ է 10 օր:
Դեղատոմսը հատուկ հաշվառման փաստաթուղթ է և պահվում է դեղատանը:

ԲԺՇԿԻ ՀՈՒՇԱԹԵՐԹԻԿ

Դեղատումսը գրվում է հայերենով կամ լատիներենով, ընթեռնելի ձեռագրով, գրիչով, ուղղումներ չեն թույլատրվում, կամ լրացվում է էլեկտրոնային առողջապահական համակարգի միջոցով՝ լրացնելով դեղատոմսերի ձևի բոլոր կետերը:

• Մեկ դեղատոմսի ձևի վրա գրվում է մեկ դեղ:

• Թույլատրվում է կատարել կրճատումներ՝ միայն սահմանված կանոններով:

• Կարծր և սորուն նյութերը գրվում են գրամներով (0,5, 1,0), հեղուկները՝ միլիլիտրերով, գրամներով և կաթիլներով:

• Օգտագործման ձևը գրվում է հայերենով կամ պացիենտին հասկանալի լեզվով: Արգելվում է սահմանափակվել ընդհանուր ցուցումներով՝ «Ներքին», «Հայտնի է» և այլն:

• Ուժի մեջ է դեղատոմսը գրող բժշկի ստորագրության առկայության դեպքում: Պահվում է 3 տարի և ոչնչացվում է հանձնախմբի կողմից:

Դեղատուն _____ Ամսաթիվը _____

Անհատական պատրաստման դեղատոմս N_____

Ընդունեց _____

Պատրաստեց _____

Ստուգեց _____ Հետազոտություն N_____

Բաց թողեց _____

Դեղատոմսերի ձև N 2

Բժշկական հաստատության,
անհատ ձեռնարկատիրոջ
(ընդգծել)
Դրոշմակնիքը (առկայության դեպքում)
Հասցեն _____
Հեռախոսահամարը _____

Սահմանված է
ՀՀ կառավարության 2017 թվականի
նոյեմբերի 9-ի N 1402 - Ն որոշմամբ
Դեղատոմսերի ձև N 2

Դ Ե Ղ Ա Տ Ո Մ Ս

հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր պարունակող դեղի համար

____ _____ 20 __ թ.
(դեղատոմսը գրելու ամսաթիվը)

Պացիենտի անունը, ազգանունը (լրիվ)_____

Ամբուլատոր բժշկական քարտի համարը _____

Պացիենտի տարիքը _____

Բժշկի անունը, ազգանունը (լրիվ), մասնագիտությունը _____

Բժշկի ստորագրությունը
Կ.Տ. (առկայության դեպքում)

Դեղատոմսը գործողության մեջ է 10 օր:
Դեղատոմսը հատուկ հաշվառման փաստաթուղթ է և պահվում է դեղատանը:

ԲԺՇԿԻ ՀՈՒՇԱԹԵՐԹԻԿ

Դեղատոմսը գրվում է հայերենով կամ լատիներենով, ընթեռնելի ձեռագրով, գրիչով, ուղղումներ չեն թույլատրվում, կամ լրացվում է էլեկտրոնային առողջապահական համակարգի միջոցով՝ լրացնելով դեղատոմսերի ձևի բոլոր կետերը:

• Թույլատրվում է կատարել կրճատումներ՝ միայն սահմանված կանոններով:

• Կարծր և սորուն նյութերը գրվում են գրամներով (0,5, 1,0), հեղուկները՝ միլիլիտրերով, գրամներով և կաթիլներով:

• Օգտագործման ձևը գրվում է հայերենով կամ պացիենտին հասկանալի լեզվով: Արգելվում է սահմանափակվել ընդհանուր ցուցումներով՝ «Ներքին», «Հայտնի է» և այլն:

• Դեղատոմսն ուժի մեջ է դեղատոմսը գրող բժշկի ստորագրության առկայության դեպքում: Պահվում է մեկ տարի և ոչնչացվում է հանձնախմբի կողմից:

Դեղատուն _____ Ամսաթիվը _____

Անհատական պատրաստման դեղատոմս N_____

Ընդունեց _____

Պատրաստեց _____

Ստուգեց _____ Հետազոտություն N_____

Բաց թողեց _____

Դեղատոմսերի ձև N 3

Սահմանված է
ՀՀ կառավարության 2017 թվականի
նոյեմբերի 9-ի N 1402 - Ն որոշմամբ
Դեղատոմսերի ձև N 3

Բժշկական հաստատության,
անհատ ձեռնարկատիրոջ
(ընդգծել)
Դրոշմակնիքը (առկայության դեպքում)
Հասցեն _____
Հեռախոսահամարը _____

Դ Ե Ղ Ա Տ Ո Մ Ս

____ _____ 20 __ թ.
(դեղատոմսը գրելու ամսաթիվը)

Պացիենտի անունը, ազգանունը (լրիվ)_____

Ամբուլատոր բժշկական քարտի համարը _____

Պացիենտի տարիքը _____

Բժշկի անունը, ազգանունը (լրիվ), մասնագիտությունը _____

Բժշկի ստորագրությունը
Կ.Տ. (առկայության դեպքում)
Դեղատոմսը գործողության մեջ է 6 ամիս:
Դեղատոմսը հատուկ հաշվառման փաստաթուղթ է և պահվում է դեղատանը:

ԲԺՇԿԻ ՀՈՒՇԱԹԵՐԹԻԿ

Դեղատոմսը է գրվում հայերենով կամ լատիներենով, ընթեռնելի ձեռագրով, գրիչով, ուղղումներ չեն թույլատրվում, կամ լրացվում է էլեկտրոնային առողջապահական համակարգի միջոցով՝ լրացնելով դեղատոմսերի ձևի բոլոր կետերը:

• Թույլատրվում է կատարել կրճատումներ՝ միայն սահմանված կանոններով:

• Կարծր և սորուն նյութերը գրվում են գրամներով (0,5, 1,0), հեղուկները՝ միլիլիտրերով, գրամներով և կաթիլներով:

• Օգտագործման ձևը գրվում է հայերենով կամ պացիենտին հասկանալի լեզվով: Արգելվում է սահմանափակվել ընդհանուր ցուցումներով՝ «Ներքին», «Հայտնի է» և այլն:

Դեղատուն _____ Ամսաթիվը _____

Անհատական պատրաստման դեղատոմս N_____

Ընդունեց _____

Պատրաստեց _____

Ստուգեց _____ Հետազոտություն N_____

Բաց թողեց _____

Դեղատոմսերի ձև N 4
Սահմանված է
ՀՀ կառավարության 2017 թվականի
նոյեմբերի 9-ի N 1402 - Ն որոշմամբ

Դ Ե Ղ Ա Տ Ո Մ Ս
դեղի բազմակի գրման

Սահմանված է
ՀՀ կառավարության 2017 թվականի
նոյեմբերի 9-ի N 1402 - Ն որոշմամբ

Բժշկական հաստատության,
անհատ ձեռնարկատիրոջ
(ընդգծել) դրոշմակնիքը
(առկայության դեպքում)
Հասցեն _____
Հեռախոսահամարը

№ Ա
в
Քանակը ----------
Ամսաթիվը ----------
Կ.Տ.

№ Բ
Քանակը
(առևտրային անվանումը) ----------
Թողարկման ձևը ----------
Քանակը ----------
Ամսաթիվը ----------

Դ Ե Ղ Ա Տ Ո Մ Ս

____ _____ 20 __ թ.
(դեղատոմսը գրելու ամսաթիվը)
Պացիենտի անունը, ազգանունը (լրիվ)
_____

Պացիենտի տարիքը _____

Բժշկի անունը, ազգանունը (լրիվ),
մասնագիտությունը_____

Բժշկի ստորագրությունը_____

Կ.Տ. (առկայության դեպքում)

№Ա
Քանակը ----------
Ամսաթիվը ----------
Կ.Տ.

№Բ
Քանակը (առևտրային անվանումը) ----------
Թողարկման ձևը ----------
Քանակը ----------
Ամսաթիվը ----------

№ Ա
в
Քանակը ----------
Ամսաթիվը ----------
Կ.Տ.

№ Բ
Քանակը (առևտրային անվանումը) ----------
Թողարկման ձևը ----------
Քանակը ----------
Ամսաթիվը ----------

№Ա
Քանակը ----------
Ամսաթիվը ----------
Կ.Տ.

№Բ
Քանակը (առևտրային անվանումը) ----------
Թողարկման ձևը ----------
Քանակը ----------
Ամսաթիվը ----------

№ Ա
в
Քանակը ----------
Ամսաթիվը ----------
Կ.Տ.

№ Բ
Քանակը (առևտրային անվանումը) ----------
Թողարկման ձևը ----------
Քանակը ----------
Ամսաթիվը ----------

№Ա
Քանակը ----------
Ամսաթիվը ----------
Կ.Տ.

№Բ
Քանակը (առևտրային անվանումը) ----------
Թողարկման ձևը ----------
Քանակը ----------
Ամսաթիվը ----------

№ Ա

№ Բ

	в Քանակը ---------- Ամսաթիվը ---------- Կ.Տ.	Քանակը (առևտրային անվանումը) ---------- Թողարկման ձևը ---------- Քանակը ---------- Ամսաթիվը ----------
	№Ա Քանակը ---------- Ամսաթիվը ---------- Կ.Տ.	№Բ Քանակը (առևտրային անվանումը)---------- Թողարկման ձևը ---------- Քանակը ---------- Ամսաթիվը ----------
	№ Ա в Քանակը ---------- Ամսաթիվը ---------- Կ.Տ. №Ա Քանակը ---------- Ամսաթիվը ---------- Կ.Տ.	№ Բ Քանակը (առևտրային անվանումը) ---------- Թողարկման ձևը ---------- Քանակը ---------- Ամսաթիվը ---------- №Բ Քանակը (առևտրային անվանումը)---------- Թողարկման ձևը ---------- Քանակը ---------- Ամսաթիվը ----------
Դեղատոմսն ուժի մեջ է 6 ամիս: Դեղատոմսը հատուկ հաշվառման փաստաթուղթ է և պահվում է դեղատանը	№ Ա в Քանակը ---------- Ամսաթիվը ---------- Կ.Տ. №Ա Քանակը ---------- Ամսաթիվը ---------- Կ.Տ.	№ Բ Քանակը (առևտրային անվանումը) ---------- Թողարկման ձևը ---------- Քանակը ---------- Ամսաթիվը ---------- №Բ Քանակը (առևտրային անվանումը)---------- Թողարկման ձևը ---------- Քանակը ---------- Ամսաթիվը ----------

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍՏԵՓԱՆՅԱՆ

Հավելված N 3
ՀՀ կառավարության 2017 թվականի
նոյեմբերի 9-ի N 1402 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԴԵՂԵՐԻ ԵՎ ԴԵՂԱՆՅՈՒԹԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ

1. Թմրամիջոցներ և հոգեմետ (հոգեներգործուն) նութեր պարունակող դեղերի, դեղանյութերի շարժը ենթարկվում է փաստաթղթային հաշվառման քանակային արտահայտությամբ (կգ, գ, մլ, տուփ, հատ)՝ ըստ անվանումների:

2. Թմրամիջոցներ և հոգեմետ (հոգեներգործուն) նութեր պարունակող դեղերի, դեղանյութերի հաշվառման համար դեղատանը վարվում է կարված, համարակալված ու կնքված Թմրամիջոցներ և հոգեմետ (հոգեներգործուն) նութեր պարունակող դեղերի, դեղանյութերի անվանաքանակական հաշվառման գիրք (այսուհետ՝ հաշվառման գիրք), որը պահպանվում է տասը տարի՝ դրանում վերջին գրառումը կատարելուց հետո:

3. Յուրաքանչյուր դեղի ամեն դեղաձևի, դեղաչափի, թողարկման ձևի և յուրաքանչյուր դեղանյութի համար հաշվառման գրքում առանձին էջ է հատկացվում: Հաշվառման գրքի էջը կազմված է հետևյալ մասերից՝ «ամսվա սկզբի մնացորդ», «մուտք», «ծախս», «ամսվա վերջի մնացորդ», «փաստացի մնացորդ»:

4. «Մուտք» մասում նշվում է ստացված քանակը՝ ըստ առանձին հաշիվ-ապրանքագիր նշելով փաստաթղթի համարն ու ամսաթիվը:

5. «Ծախս» մասում գրանցվում է ամեն օրվա վերջում՝ տվյալ օրվա ընթացքում փաստացի իրացված դեղերի և անհատական դեղատոմսերի համաձայն դեղերի պատրաստման համար ծախսված դեղանյութերի քանակները:

6. «Ամսվա վերջին մնացորդը» որոշվում է հաշվարկային եղանակով՝ ապրանքային հաշվեկշռի բանաձևով՝ Մվ=Մսկ +Մա-Ծա, որտեղ՝ Մվ-ն մնացորդն է ամսվա վերջում,

Մսկ-ն մնացորդն է ամսվա սկզբում, Մա-ն մուտքն է ամսվա ընթացքում, Ծա-ն ծախսն է ամսվա ընթացքում:

7. «Փաստացի մնացորդը» տվյալ ամսվա համար որոշվում է դեղատանը փաստացի առկա մնացորդների հիման վրա և գրանցվում հաշվառման գրքում:

8. Յուրաքանչյուր ամսվա առաջին օրը դեղատան նյութական պատասխանատու անձը համեմատում է փաստացի մնացորդը դրանց ամսվա վերջին հաշվառման գրքի մնացորդի հետ: Հաշվեկշռում տարբերությունների տվյալների կամ հաշվեկշռի տեղեկություններն անցկացված գույքագրման արդյունքներին չհամապատասխանելու մասին տեղեկությունները հայտնաբերելուց հետո 3-օրյա ժամկետում տեղեկացնում է իրավասու մարմիններին՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

9. Սույն կարգի 8-րդ կետով սահմանված դեպքերի համար կազմվում է արձանագրություն, որը պահպանվում է դեղատանը՝ 10 տարի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍՏԵՓԱՆՅԱՆ